# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արզական գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

10.08-2011թ. գյուղ Արզական

2011 թվականի օգոստոսի 10-ին տեղի է ունեցել Արզական համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

*Մասնակցությամբ՝*
Համայնքի ավագանու անդամներ

1. Ա. Գրիգորյանի
2. Հ. Հայրապետյանի
3. Ա. Հայրապետյանի
4. Ա. Մելքոնյանի
5. Ա. Պարսամյանի
6. Ա. Խլղաթյանի

Համայնքի ղեկավարի աշխատակզմից

1. հ/ղ տեղակալ՝ Պ. Խաչատրյանի
2. աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանի
3. գլխավոր մասնագետ՝ Ա. Շահբազյանի
4. գլխավոր մասնագետ՝ Գ. Մովսիսյանի
5. առաջատար մասնագետ՝ Զ. Մովսիսյանի
6. առաջատար մասնագետ՝ Կ. Հովհաննիսյանի
7. առաջին կարգի մասն.՝ Հ. Ենգիբարյանի
8. առաջին կարգի մասն.՝ Զ. Հարությունյանի
9. առաջին կարգի մասն.՝ Ա. Մարգարյանի

Համայնքի բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

## *ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

Հարգելի համագյուղացիներ, հարգելի ներկաներ համաձայն սահմանված կարգի այսօր Ձեզ կներկայացնեմ նախորդ՝ 2010 թվականի հաշվետվությունը ՝ բյուջեի կատարման մասին :

Կփորձեմ այն ներկայացնել հակիրճ, որն իր մեջ կներառի բյուջեի մուտքերի և ծախսերի տարեկան հաշվետվությունը ամբողջությամբ, ինչպես նաև տարվա ընթացքում կատարված աշխատանքները:

Նախ ասեմ,որ մեր բոլոր սպասումները և կանխատեսումները չիրականացան, այսինքն օտարվող համայնքի գույք, որպես այդպիսին, չի իրացվել , իսկ թե որոշակի շարժեր եղել են, ես այն կներկայացնեմ իմ այսօրվա ելույթում:

Արզական համայնքի 2010թ. բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2009 թվականի հունվարի 19-ի թիվ 1/4 որոշմամբ, 72,82մլն. դրամ մուտքային և նույնքան գումար ծախսային մասով:

Բյուջեի դիֆիցիտը կազմել է 4,887,3մլն. դրամ, որը համալրվել է 2009թ. տարեվերջյան ազատ մնացորդով:

- 2010թ. պլանավորվել էր հավաքագրել 12,915մլն. դրամ հողի հարկ, փաստացի հավաքագրվել է 12,934մլն. դրամ, կամ պլանավորված հավաքագրումը կատարվել է 100,0%-ով: Նման ցուցանիշ համայնքում առաջին անգամ է արձանագրվում, որը պայմանավորված էր հողի հարկի տույժ ու տուգանքներից ազատման մասին ՀՀ օրենքի ընդունումից: Սակայն այս մասով լուրջ աշխատանքներ կան կատարելու՝ կապված այն փաստից, որ ընդամենը 150 գյուղացիական տնտեսություն է վճարել իր հողի հարկի ապառքը ամբողջությամբ:

- Գույքահարկը պլանավորված էր հավաքագրել 27,85մլն. դրամ, փաստացի հավաքագրվել է 28,61մլն. դրամ, գույքահարկի հավաքագրումը կատարվել է 102,7%-ով:
- Հողի վարձակալությունը պլանավորված էր 1,184մլն. դրամ, փաստացի հավաքագրվել է 1,191 մլն. դրամ, հողի վարձակալության հավաքագրումը կատարվել է 100%-ով:
- Տեղական վճար պլանավորվել էր 1,089 հազար դրամ, փաստացի հավաքագրվել է 153,0 դրամ, կատարվել է 14%:
- Հաստատված բյուջեով պլանավորվել էր հավաքագրել 564,8 հազար դրամ տեղական տուրք, փաստացի հավաքագրվել է 564,8 հազար դրամ, կատարվել է 100%:
- Հողի իրացումից պլանավորվել էր 6,439 մլն. դրամ մուտք, փաստացի մուտքագրվել է 6,673մլն. դրամ:

Այս վերջին երկու կետում նշված թերակատարումների հիմնական պատճառը 2010թ. տնտեսվարող սուբյեկտների գործունեության նվազեցման արդյունք էր: Պետք է նշեմ, որ ընդհանուր տարեկան բյուջեն 72,177,1 մլն. դրամ է, պետական բյուջեից մենք ստացել ենք 13722,3 մլն. դրամ դոտացիա, որը կազմում է բյուջեի 19%-ը: Գիտակցելով և հասկանալով պետության կողմից տրվող դոտացիայի բաշխման կարգը իմ կարծիքով հիմնավորման և վերանայման կարիք ունի:

2010թ. ընթացքում Արզական համայնքի բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվել է աշխատակազմի պահպանման, ծառայությունների, ապրանքների ձեռք բերման հետևյալ ոլորտները՝

Օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման համար ծախսեր պլանավորվել էր 27,094 մլն. դրամ, փաստացի ծախսվել է 25,062 մլն. դրամ:

2010թ. վարչական բյուջեի եկամուտների հավաքագրումը կատարվել է 99,4%-ով:

Նշեմ, որ աշխատակազմի թվաքանակը ունի այսպիսի կառուցվածք, այն բաղկացած է 19 աշխատողներից՝ համայնքի ղեկավար, 1 հայեցողական պաշտոն, 9-ը համայնքային ծառայող, 8 տեխնիկական սպասարկող անձնակազմ, 1 քաղաքացիական աշխատանքներ իրականացնող:

Համայքում գործում են երեք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ ՀՈԱԿ-ներ, որոնք ֆինանսավորվում են համայնքի բյուջեից: Ներկայացնում եմ տարվա ֆինանսավորումը ըստ ՀՈԱԿ-ների:

- Արզականի մանկապարտեզ ՀՈԱԿ-պահպանման ծախսեր՝ 8,779 մլն. դրամ, աշխատակազմի թվաքանակը՝ 13 աշխատող, սաների թիվը՝ 52 , տնօրեն՝ Աննա Գևորգյան:
- Արզականի արվեստի դպրոց ՀՈԱԿ-պահպանման ծախսեր 4,925 մլն. դրամ, աշխատակազմի թվաքանակը՝ 9, աշխատող, սաների թիվը՝ 73, տնօրեն Թամարա Խաչատրյան:
- Արզականի գերեզմանատուն ՀՈԱԿ-պահպանման ծախսեր 2,743 մլն. դրամ, աշատողների թվաքանակը՝ 6, տնօրեն Սամվել Հովհաննիսյան:
- Մշակույթի տան աշխատակազմի պահպանման ծախսերը կազմել է 3,576 մլն. դրամ, աշխառտակիցների թվաքանակը՝ 4, տնօրեն Վարդան Հովհաննիսյան:
- Թեպետ պետ. պատվերի շրջանակներում իրականացվում է անասնաբուժական ծառայություն, որի համար վճարվում է 600 հազար դրամ: Համայնքում անասնաբուժական ծառայությունը պատշաճ կազմակերպելու նպատակով համայնքի բյուջեից լրացուցիչ վճարվում է անասնաբուժին ևս 480 հազար դրամ տարեկան աշխատավարձ:

- Արտաքին տնտեսական աջակցություն բաժնից 150,0 հազար դրամ օգնություն է տրվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

2010թ. համայնքում բյուջեի միջոցների հաշվին ներդրվեց համայնքի աղբահանությունը իրականացնելու գործընթացը, որը որոշակի թերացումներով հանդերձ իր դրական նշանակությունը ունեցավ համայնքի սանիտարահիգիենիկ վիճակի վրա, որի դիմաց համայնքի բյուջեից վճարվեց 1,175 մլն. դրամ, ներառյալ աղբատեղի վճարը:

- Խմելու ջրի ընթացիկ վերանորոգման համար ծախսվել է 500 հազար դրամ, իսկ կապիտալ վերանորոգման համար 995,7 հազար դրամ:
- Մշակութային, հիշատակների և տոների օրերին նվիրված միջոցառումների համար ծախսվել է 600 հազար դրամ /զորակոչիկներին հուշանվերներ, ամանոր, մայիսի 9-ը, ապրիլի 24 և այլն/:
- Համայնքի սոցիալապես անապահով խավերին աջակցելու նպատակով համայնքի բյուջեից պլանավորվել և ծախսվել է 4,568 մլն. դրամ, որից /համապատասխան ավագանու որոշմամբ/ օգնություն հուղարկավորությունը կազմակերպելու նպատակով՝ 320 հազար դրամ, օգնություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ 1,28 մլն. դրամ:

Արձագանքելով կառավարության որոշմանը, առ այն, որ պետք է պատշաճ տեսքի բերել, բարեկարգել համայնքների Հայրենական Մեծ Պատերազմի զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանները, տարեվերջին ունենալով համապատասխան միջոցներ 5.338 մլն. դրամի չափով իրականացվեց հուշարձանի լուսավորության և բարեկարգման աշխատանքները: Սակայն պետք է նշեմ, որ կան շատ աշխատանքներ հուշարձանի շրջակա տարածքը վերջնական տեսքի բերելու համար:

Հաշվետվությանը կից ներկայացվում է աուդիտորական լիցենզիավորված կազմակերպության եզրակացությունը: Համաձայն որի <<համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը բոլոր էական դրույթներով ճիշտ է արտացոլում համայնքի ֆինանսական դրությունը առ 31.12.2010թ.-ի դրությամբ և համապատասխանում է հաշվապահական ընդունված սկզբունքներին>>:

Կուզեի անրադառնալ նաև համայնքի 2011թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման արդյունքներին: Այսպես՝

- եկամուտները առանց դոտացիայի պլանավորվել է 11453,9 հազար դրամ, կատարվել է 9703.9 հազար դրամ կամ 84.7%:
- Հողի հարկ պլանավորվել է 3,353 հազար դրամ, կատարվել է 901,8 հազար դրամ կամ 26,89%:
- Գույքահարկ պլանավորվել է 7,212 հազար դրամ, կատարվել է 5,364 հազար դրամ կամ 74,37%:
- ծախսերը պլանավորվել է 15999,6 հազար դրամ, կատարվել է 15439,6 հազար դրամ կամ 96,49%:

Իմ և աշխատակազմի անունից, ինչու չէ նաև համայնքի բնակիչների անունից հավաստիացնում եմ, որ 2011թ. բյուջեն բոլոր տնտեսագիտական դասակարգման հոդվածներով՝ տարվա կտրվածքով կկատարվի 100%-ով:

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Արզական համայնքի վերաբերյալ

1. Համայնքի ղեկավար Նորիկ Ժորայի Մովսեսյան

Տեղակալ Պարույր Հենրիկի Խաչատրյան

Քարտուղար Աղվան Սրապիոնի Հովհաննիսյան

Աշխատակազմի թիվը 19 /տասնինը/

Ավագանու անդամների թիվը 7 /յոթ/ , որից կին 0

Համայնքի ծխերի թիվը 745 /յոթ

Ազգաբնակչության թիվը 2942

Համայնքի ընտրողների թիվը 2270 /երկու հազար երկու հարյուր յոթանասուն /

2. Վարչական տարածքը 8462, 0 հա /առ 06-2009թ. 3686,0 հա/

որից բնակելի 175,6 հա տնամերձ 113,0 հա այգեզործական

3. Համայնքի ենթակայության ձեռնարկություններ (գործունեության ոլորտները, աշխատողների թիվը)

Արվեստի դպրոց, մշակույթի տուն

| | աշխատողների թիվը | սովորողների թիվը |
|---|---|---|
| Արզականի արվեստի դպրոց ՀՈԱԿ | 9 /ինն/ | 60 /վաթսուն/ |

Տնօրեն՝ Թամարա Խաչատրյան կրթություն բարձրագույն

/անուն, ազգանուն/

4. Համայնքում գործող մշակույթի , առողջապահության կազմակերպություններ

| | աշխատողների թիվը | սովորողների թիվը |
|---|---|---|
| Արզականի միջն. դպրոց | 48 /քառասունութ/ | 329 /երեք հարյուր քսանինը/ |

Տնօրեն Սամվել Հակոբյան կրթություն բարձրագույն

/անուն, ազգանուն/

| | աշխատողների թիվը | սովորողների թիվը |
|---|---|---|
| Արզականի մանկապարտեզ ՀՈԱԿ | 13 /տասներեք/ | 55 /հիսունհինգ/ |

Տնօրեն՝ Աննա Գևորգյան կրթություն բարձրագույն

/անուն, ազգանուն/

Արզականի գերեզմանատուն ՀՈԱԿ 6 /վեց /

Տնօրեն Սամվել Հովհաննիսյան կրթություն բարձրագույն

/անուն, ազգանուն/

Գրադարաններ աշխատողների թիվը 1 գրքային ֆոնդ 8628 հատ

Մշակույթի, սպորտի օջախներ Մշակութի տան աշխատողների թիվը- 3 /երեք/

Մշակույթի տան տնօրեն Վարդան Հովհաննիսյան

Բուժկետ /բուժամբուլատորիա/ աշխատողների թիվը 11 տնօրեն՝ Անուշ Թադևոսյան

5. Համայնքի կոմունալ-կենցաղային ապահովվածության վիճակը /համառոտ/

Խմելու ջրամատակարարում 430 տնտեսություն

Գազամատակարարում բաժանորդների քանակը 556

Էլեկտրամատակարարում բաժանորդների քանակը 680

Հեռախոսաֆիկացում բաժանորդների քանակը 440

6. Համայնքի 2010թ. բյուջեի կատարման մասին /հազար դրամ/

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եկամուտները (առանց դոտացիայի) | 53005,4 | կատարվել է | 52902,0 | կամ | 99,8% |
| հողի հարկ | 12915,5 | կատարվել է | 12934,1 | կամ | 100,1% |
| գույքահարկ | 27851,7 | կատարվել է | 28616,8 | կամ | 102,7% |
| ծախսերը | 71615,0 | կատարվել է | 64614,2 | կամ | 90,2 % |

7. Համայնքի 2011թ. բյուջեի կատարման մասին /1-ին եռամսյակ/

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եկամուտները (առանց դոտացիայի) | 13154,5 | կատարվել է | 7269,0 | կամ | 55,25% |
| հողի հարկ | 3353,7 | կատարվել է | 901,7 | կամ | 26,88% |
| գույքահարկ | 7212,7 | կատարվել է | 5363,9 | կամ | 74,36% |
| ծախսերը | 15999,6 | կատարվել է | 15439,6 | կամ | 96,49% |

8. Սեփականաշնորհվել է 615,393 հա վարելահող

9. Պահուստային ֆոնդի հողեր 958,739 հա, վարելահող 82,667 հա, այգի --- հա

2010թ. վարձակալվել է 53,0 հա, գանձվել է 1191050 դրամ կամ 92 %

10. 2010թ. ոռոգման ջրի վարձավճար /հազար դրամ/ 330,5 հավաքագրվել է 92,5 %

ԵԼՈՒՅԹՆԵՐ՝

Արզական համայնքի բնակիչ՝ Մյասնիկ Թովմասյանը իր շնորհակալական խոսքը հայտնեց գյուղապետարանի կողմից իրականացված համայնքի փողոցների լուսավորության աշխատանքների համար և շատ կարևորելով նմանատիպ աշխատանքները, համայնքի բնակիչների անունից խնդրեց, բյուջեում մուտքերի առկայության դեպքում լուսավորության աշխատանքներ կատարվեն նաև համայնքի մյուս փողոցներում:

Գագիկ Ազիզյանն իր ելույթում նշեց,որ համայնքում գյուղապետարանի կողմից 2010 թվականին իրականցվել են մի շարք շինարարական աշխատանքներ,որը ճիշտ է 2009 թվականի համեմատ ծավալներով քիչ են եղել, սակայն հասկանալի է,որ կապիտալ շինարարական աշխատանքների ծավալը կախված է համայնքի բյուջեի մուտքերի ծավալից:

Գոհացուցիչ է խմելու ջրի ջրագծի մասնակի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև ոռոգման ցանցերի վերականգնման աշխատանքներ:

Նա կոչ արեց բնակչությանը հարկային պարտականությունների լիրարժեք կատարում, որպեսզի համայնքում շարունակվեն իրականացվել կապիտալ շինարարական և բարեկարգման աշխատանքներ:

Սուրիկ Հովհաննիսյանը և Մեսրոպ Մարկոսյանը, նշելով, որ վերջին տարիներին համայնքում շարունկական իրականացվում են համայնքի բարեկարգման աշխատանքներ, սակայն անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչ Մյասնիկ Թովմասյանը առաջարկեց , որ եթե համայնքի բանկիչները լիովին կատարեն իրենց հարկային պարտականությունները, ապա հայանքում շարունակական բնույթ կկրեն կապիտալ շինարարական և բարեկարգման աշխատանքները:

Ժորա Հովհաննիսյանն առաջարկեց մեծ ուշադրություն դարձնել մշակույթի տան շենքի վերանորոգման աշխատանքներին:

ՈՐՈՇՎԵՑ՝

Համայնքի ժողովն որոշեց համայնքի ղեկավարի 2010 թվականի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և առաջիկայում ավարտին հասցենել համայնքի փողոցների լուսավորության աշխատանքները, ինչպես նաև իրականացնել համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամսերի ոռոգման ցանցերի հիմնանորոգումը և նոր ջրագծերի անցկացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄՈՎՍԵՍՅԱՆ